ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՓԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պարսկաստանի համար տարեկան 5 ֆր. և կամ 2 րբլ. 50 կոպ. Թղթակցութեան համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, տարեկան բաժնորդագինն է 20 ֆր., վեցամսեայն 10 ֆրանգ և եռամսեայն 5 ֆրանգ։

Բաժնեգինները կանխիկ կը վճարուին և հնօրէնութիւնն ինք կը վճարէ լրագիրը ղրկելու փոստի ծախքը։

Նամակ և ծրար պէտք է ղրկել հետևեալ հասցէով։ M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Զ ՏԱՐԻ ԹԻՒ 64

1891 ԱՊՐԻԼ 11

ՄԱՐՏ 30 (Հ. Տ.)

ՁԱՓԱԳ

Կը հրատարակուի Երեք. օրեր

ՊԱՏՄԱԿԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւններն։

Պարտաւոր չէ վերադարձունել չհրատարակուած ձեռագիրներն։

Յանուցմունք կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։

Յանուցման 1 միջակ գիրը 1 սանտիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանտիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Allées de Meilhan, 44.)

ՀԱՑՈՑ

ՀԱՑԲԵՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻՈՒԹԻՒՆ

ՆՊԱՏԱԿ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐ

(Փաղուած կանոնագրին)

«Հայոց Հայրենասիրական Միութեան» նպատակն է աշխատիլ վարչական բարենորոգումներ մացուցանելու Թիւրքահայաստանի մէջ, Հայ ժողովրդի տեղական պէտքերին համեմատ։ Հայ ժողովրդի ցանկութիւնն է իրաւունք ստանալ ազատօրէն ինքզինք կառավարելու որով միայն պիտի կրնան վերնալ այն հարստահարութիւնները որոնք այսօր Հայաստանի թշուառութեան և աւերակ դառնալուն պատճառ կը լինին։

«Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը իր նպատակ իրագործելու համար իր կարողութեան չափով կը գործադրէ ամեն յարմար եղած միջոցներն, ժամանակի պահանջներին համեմատ կաշխատի ներքին այժ գոյացունել Ազգին մէջ իր ազատութեան համար, հրատարակութիւններ կանէ, դիմումներ կանէ որոց որ պէտք է և նիւթապէս ու բարոյապէս կը քաջալերէ անոնց որոնք անձնուիրութեամբ կաշխատին հայրենիքի ազատութեան գործին։

Միութիւնը կունենայ իրեն բերան եղող լրագիր որ, բացի զանազան լուրեր տալէ իբրեւ լրագիր, կը հաղորդէ ընդհանրութեան ինչ որ Միութիւնը ուզէ հաղորդել, տեղեկութիւններ կուտայ Հայաստանի և տարբնակ Հայերի դրութեան վրայ և կը ծառայէ հայրենասիրական եռանդը արծարծելու Հայերին մէջ։*

Յանօթ. «Հայոց Հայրենասիրական Միութեան» անդամակցիլ կամ թղթակցիլ ուզողներն պէտք է դիմեն հետեւեալ հասցէին.

M. Portoukalian

(FRANCE) Marseille

* Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը կը նպաստէ Ամերիկա լրագրի հրատարակման։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սովորական խօսքեր.—Հայ ազգի 4000 ամեակը.— Օտար մամուլի կարծիքը.—Հարցումներ անգլիական խորհրդարանին մէջ.—Մրքայել Մեծ Դուքսը.—Լորտ Կրանվիլի բաղումը.— Օսմանեան Սահմանադրութիւնը.—Թիւրքիան և յոյներ.—Արտասահմանի յոյներ.—Յանուցմունքներ.—Բանասիրական (Թոմաս Բոցարիս)։

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԽՕՍՔԵՐ

Ա.

Բազմաթիւ են այն խօսքեր որոնք մեքենապէս կը կրկնուին, մինուոյն ժամանակ թէ՛ ոգէտէն և թէ՛ խելացի երեւոյթ ունեցող անձէն, մանաւանդ անոնցմէ որոնք կուզեն ցուցնել թէ իրենք ալ իրենց սեփական կարծիք ունին խնդրին վրայ։

Սակայն այդ սովորապէս կրկնուած խօսքեր ինչ իմաստ ունին, կամ իրօք խելացի ու գործնական միտք մը կը յայտնէ՞ն թէ ոչ միայն խելացի կարծուած մարդու մը բերնէն ելած ուռուցիկ խօսք մ'են և ուրիշներ ալ այդ խօսքեր կը կրկնեն առանց հասկնալու։ Տեսնենք։

Ահա այդ խօսքերէն մին որ Հայերի մէջ յաճախ կը կրկնուի թէ «Ինչո՞ւ հարուստ Հայ մը, մեծ վաճառական մը չհանդնիր հայրենասիրական գործի դլուխ որ դրամ չատ ժողվուի և գործը աւելի չուտ առաջ քալէ»։

Այդ խօսքը կրկնողներն մեզ մի քանի դասի կրնանք բաժնել, նայելով թէ իրենց այդ համոզման բուն ներքին պատճառներն որո՞նք են։

Մի մասը և այդ ալ դրամ տալ չուզող և ազգային գոհաբերութենէ խրտչող անձերն են որոնք իրենց ուրիշ շատ մը անվերջ պատրուակներուն մէջ այդ պատրուակն ալ իբր փաստ առաջ կը բերեն արդարացունելու համար իրենց քսակներուն բերանը պինդ դոցելը, և որովհետեւ իրենք ալ լաւ հասկցած են թէ այժմ հայ վաճառականներէ և դիրք ունեցող պաշտօնեաներէն ոչ մին Ռուսիոյ և Թիւրքիոյ մէջ ունեցած չահերը վտանգի չդներ և իր անուն հրապարակով չյայտներ ուրիշն իրենք ալ համարձակ կերպով կրնան դոչել թէ իրենք պատրաստ են դրամ տալու եթէ ապահով դրամատէրներ տեսնեն։

Մի ուրիշ մաս, այդ ալ 10–20 ֆր. տուօղ և առջեւէն թմբուկ զարնել տալ սիրող անձերն են որոնք կը փափագին իրենց տալիք աղքային փոքրիկ տուրքն, 30–50 ֆրանգի միջոցով իրենց անուն ծանօթացունել հայ մեծ վաճառականի մը կամ բարձր դիրք ունեցող հայ պաշտօնեայի մը, որպէս զի երբեմն ալ այդպիսով բաղդ ունենան այդ անձնաւորութենէ իրենց ուղղուած ստացագիրը կամ երկտող ասոր անոր ցոյց տալ ու պարծենալ։ Մէկ խօսքով այդ կարգի Հայերն ալ ինքզինքի յանձնառարութեան մի տեսակ միջոց կուզեն դարձունել հայրենիքի համար տալիք այդ նուէրը և ոչ թէ ազով իրենց պարտք կատարել։ Ուրեմն այդ մասին մէջ ալ ցուցամոլութեան և կամ ուրիշ անձնական հաշիւ մ'է որ կրկնել կուտայ վերև յիշուած առարկութիւնը (1)։

(1) Հայերի մէկ մասին ունեցած այդ թոյլ կողմ մի քանի խմբագիրներն սրատես աչքերէն չուտով դիտուած է անշուշտ որոնք զայն պատուական առիթ մը համարած են օգուտ քաղելու հայ ժողովրդէն, և ապացոյց որ առանց կարմրելու կելլեն իրենց իբրեւ ամենագլխաւոր արժանիք ցոյց կուտան այն բան որ մի քանի օտար անձերի և օտար դրամապահի անուն դրած ունին իրենց թերթի ճակատին վրայ և այդ բան դրամ քաշելու իբր մի հրապոյր կուզեն գործածել։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹՈՄԱՍ ԲՈՑԱՐԻՍ (1)

(Ցուհական պատմուբիւնից)

Ա.

Ասիական Թիւրքիայի և Յունաստանի միջավայրումն է տարածվում յունական այն ծովը, որին Արշիպելագոսի ծով են կոչում և նրա միջի հարիւրաւոր մանր կղզիներին էլ՝ Արշիպելագոսի կղզիներ։

Տասնեւհինգերորդ դարում երբ Տաճիկները տիրել էին Յունաց կայսրութեան մեծ մասին և Սուլթան Մահմուտ Բը զօրեղ բանակ էր կազմում Բիւզանդիոնն ևս խլելու Յոյների ձեռքից, տաճիկ կառավարիչներ, ժողովուրդ, կադի և հալար տեսակ արիւնարբու մահմետական ցեղեր մրրեխի պէս ցրուել բռնել էին այդ կղզիները, սկսած Լիմնո կղզիից մինչեւ Կրետէն։

Դրանց թուում էր նաեւ ամենափոքրիկ Սիրա կղզին, ուր կար մի բուռ յոյն ժողովուրդ, ունէր մի փոքրիկ Հերմոպոլիս քաղաքը և մի քանի խղճուկ գիւղեր, որոնք կպել քաղաքին, արուարձանի կերպարանք էին ստացել։

Կղզին չատ էլ գեղեցիկ չէր. նրա մէջ գտնուում էր բուսականութիւն, բայց շատ քիչ, որովհետեւ հողը կաւային էր. իսկ կաւային տեղում ծառ բուսցունելը համարեա անհնար է։

Բնակիչները մեծ մասամբ ձկնորսութիւնով էին զբաղվում. նրանց փոքրիկ նաւակները որոնք ծփում էին ծովի ջրի վրայ, կանայք տնից տուն էին մանում և իրենց տալիք աղգային փոքրիկ տուրքի, 30–50 ֆրանգի միջոցով իրենց անուն ծանօթացունել հայ մեծ վաճառականի մը կամ բարձր դիրք ունեցող հայ պաշտօնեայի մը, որպէս զի երբեմն ալ այդպիսով բաղդ ունենան այդ անձնաւորութենէ իրենց ուղղուած ստացագիրը կամ երկտող ասոր անոր ցոյց տալ ու պարծենալ։ Մէկ խօսքով այդ կարգի Հայերն ալ ինքզինքի յանձնառարութեան մի տեսակ միջոց կուզեն դարձունել հայրենիքի համար տալիք այդ նուէրը և ոչ թէ ազով իրենց պարտք կատարել։ Ուրեմն այդ մասին մէջ ալ ցուցամոլութեան և կամ ուրիշ անձնական հաշիւ մ'է որ կրկնել կուտայ վերև յիշուած առարկութիւնը (1)։

(1) Հայերի մէկ մասին ունեցած այդ թոյլ կողմ մի քանի խմբագիրների սրատես աչքերէն չուտով դիտուած է անշուշտ որոնք զայն պատուական առիթ մը համարած են օգուտ քաղելու հայ ժողովրդէն, և ապացոյց որ առանց կարմրելու կելլեն իրենց իբրեւ ամենագլխաւոր արժանիք ցոյց կուտան այն բան որ մի քանի օտար անձերի և օտար դրամապահի անուն դրած ունին իրենց թերթի ճակատին վրայ և այդ բան դրամ քաշելու իբր մի հրապոյր կուզեն գործածել։

Տաճիկները այստեղից այնտեղից դուրս էին ցցում իրենց փաթթոցաւոր գլուխները։

Այդ միջոցին գէպի անծուխ խրճիթն էր քայլում մի երիտասարդ քահանայ, որը ձեռքին թաչկինակով մի քառակուսի բան էր բռնել և մեղմ ձայնով երգելով, իբր ձեռքն էր պարզում անցնող բարեպաշտ քրիստոնեաներին։ Ամեն ոք կանգնում, վերցնում էր իւր կլոր գլխարկը, մօտենում համբուրում էր պարզուած ձեռքը, իսկ շատերն էլ հետեւում էին նրան։

Եւ այսպէս քահանան աղօթքներ մրմնջալով, հինգ-վեց բարեպաշտ Յոյների հետ մօտեցաւ գծուծ խրճիթին։

— Այստեղ է, չէ՞, դարձաւ նա իրեն հետեւողներից մէկին։

— Այո՛, տէր հայ՛ր, այդտեղ է, ասացին նրան։

Քահանան գլուխը կռացրեց և ներս մտաւ. ներս մտան նաեւ բոլոր նրան հետեւողները։

Նրանց մտած սենեակը շատ փոքրիկ էր, միջի կահ-կարասիքը խարխուլ և մաշուած. մի անկիւնում դրուած կար տախտակեայ մի թախտ, որի վրայ պառկել էր մի հիւանդ կին. նրա երեսը կապտել էր, նա հազիւ շնչում էր և րոպէ առ րոպէ սպառում էր մահուան. քահանան ձայնը բարձրացնելով քանդեց ձեռքի առարկայի վրայից թաչկինակը, գըլ-

Այդ երկու դասակարգի Հայերին համար մեր կողմէ առարկութիւն մը չունինք ընելիք, որովհետեւ աւելորդ աշխատութիւն մը կը լինի այդ. քանի որ կծծի մարդը քարոզի, խրատի և փաստի չնորհով իր քսակ բացած չունի երբէք, եթէ փոխարէնն չահ մը ստանալու ապահովութիւն չկայ: Նա արցունք կրնայ թափել, ըստ տեղին, հայրենիքի թշուառութեան համար, բայց սանթիմ տալ մեծ ձանձրութիւն կը համարի: Ծուլացամոլ մարդուն համար ալ փաստ օգուտ չունի, ընդհակառակն նա այնչափ աւելի կատէ փաստերը որքան ադանք զօրաւոր են իր պարծենկոտութեան արգելք լինելու: Ինք համոզուած է որ 20–30 ֆրանգ իրը ազգային նուէր տալով մեծահարուստ անձի մը կամ օտարական պաշտօնեայի մը, ինքզինք անոնց ծանօթացունելու չատ աժան և յարմար միջոց մը զօրծագրած կը լինի:

Կայ ուրիշ երրորդ մաս մ'ալ որ միեւնոյն առարկութիւնները ունի և նոյնպէս ջերմ փափագ կը յայտնէ որ դրամով նշանաւոր մարդ մը գործին գլուխն անցնի, բայց այդ դասի անձերին կը ջանանք պատասխանել և անոնց խօսիլ մեր փաստեր. որովհետեւ ադանք առանց ներքին անձնական պատճառ մ'ունենալու, լոկ միամիտ փափագ մը յայտնելու համար այդ սովորական խօսքերը կը կրկնեն, դանոնք ուրիշներ լսած լինելով և զայն զօրծնական մտքի մը տեղ ընդունելով:

Մ. Ա.

(տես Հայաստան թ. փետր. երես 8): Եւ Հայերի մի մասն ալ որ կերեւի թէ բաւական կը չլանայ այդ խոչոր անուններէն, այլ եւս անհոգ կը մնայ իր գործին համար աշխատողների արժէքը ինքնին գատելու. թէեւ ուրիշ տեղ ազգի մէջ այդպիսի վարմունք մը ծիծաղելի պիտի լինէր: Եւ իրօք տարօրինակ չէ՞ր լիներ եթէ օրինակ. Պուլկարները իրենց Զանքօֆի կամ Սթամպուլօֆի անկեղծութիւնը և հայրենասիրութիւնն չափելու և անոնց վրայ վստահութիւն դնելու և չդնելու համար Փարիզցի փաստաբանի մը և կամ Պերլինցի փրօֆէսէօրի մը խորհրդին դիմէին:

ՀԱՑ ԱԶԳԻ 4000 ԱՄԵԱԿԸ

Առաջիկայ տարուայ վերջում լրանում է Հայ ազգի 4000 ամեակը: Կարճ խօսքեր են այս. սակայն քանի՛ մեծ ամեծ մտքեր են պարունակում և քանի՛ վեհ ու վսեմ յիշատակներ: Քանի՛ մեծութեան և փառաց հետքեր կան այդ քանի մի խօսքերի մէջ. չորսհազարամեայ ազգ!!! Մ'ր Հայը չէ հպարտանում դորա վրայ. ո՞ր Հայը Աստուծոյ փառք չէ տալիս իր Հայ ծնուելուն համար: Եւ ո՞ր Հայը չէ զգում իր ազգի մեծ նշանակութիւնն, երբ à posteriori մտածում և գուցէ և ուրախանում է թէ այսօր այդ մեծ ազգ, մեծ հսկան, որի կանգնողները վիթխարի սխրագործներ են եղել, որ 4000 տարի շարունակ հանճարներ, հրեշտականման անձեր է տուել իր միջից, նոյն այդ մեծ ազգն այսօր դեռ ապրում է թարմ ոյժերով և մեղ նման փոքրիկ մարդիկ նորա փրկութեան համար գործել են կարենում: Եթէ ասենք անբախտ է Հայը զի նորա ազգը թշուառութեան մէջ է. միթէ՞ իրաւունք չունենք ասելու թէ բախտաւոր է Հայը, վասն զի մեծ առպարէզ ունի իր փառաւոր ազգի համար գործելու, ազգի համար, որի անուամբ հսկայներ, հերոսներ, հրեշտականման անձնաւորութիւններ, հանճարներ, հոգիներ են զոհուել: Այսօր միջոց ունենք մեր յիսնամեայ կեանքը, մեր չնչին գոյութիւնն տիեզերական այն մեծ յաչքը ձանին նուիրելու, զոհելու:

Այսօր ամենայն Հայի համար սուրբ է այդ մեծ ազգի իրաքանչիւր արդիւնք, իրաքանչիւր յիշատակ. այսօր իրաքանչիւր Հայի համար սուրբ է և պաշտելի այն ամենայն ինչ որ ժառանգել է այդ մեծ ազգից: Ամենայն մի քար, ամենայն մի աւերակ, ամենայն մի յետնեցած, որոնք արժանացել են այդ մեծ ազգի ուշադրութեան, ներկուել են նորա որդւոց արեամբ, պահպանուել են նորա աերանց և տիկնանց զոհաբերութեամբ, սուրբ են և պաշտելի իրաքանչիւր Հայի համար: Վանօրայ և ով այսօր այդ մեծ ազգի սրբութիւնների համար գոր ձել գիտէ, մեռնել կարէ, նա է ճշմարիտ Հայն. իսկ օ՛վ գոյա գէմ է եղնում, չնչին է նա իր համար արիւն թափող այդ մեծ ազգի գիմաց, հաչող է նա այդ 4000 ամեայ յուշարձանի գիմաց, և իր թուլութիւնը միայն իր ղղուելի գառիւներով է ծածկում...

Ծօնել պէտք է այդ մեծ տօնը, յուշարձաններ կանգնել պէտք է տիեզերքի ամենայն անկիւններում, յուշարձաններ ի պատիւ մարդկութեան և ի յիշատակ մարդկութեան այդ մեծ տոհմին. յուշարձաններ ի փառս ամենայն Հայի որ իր Հայութեան ինչ լինելը ճանաչում է, որ իր չնչինութիւնը զգում է իր ազգի մեծութեան գիմաց, որ իր «ես»ի զոհմամբ հասնել գիտէ այդ մեծ ազգի ժառանգաւորութեան:

Որքան ուրախալի կը լինէր եթէ մէկ փոքրիկ գրուածք հրատարակուէր իրրեւ մէկ թռուցիկ հայեացք Հայ ազգի այդ 4000 ամեայ կենաց վրայ այն բոլոր լեզուներով որով խօսում են նաեւ գաղթական Հայերը: Բայց ուրախալի կը լինէր եթէ իրաքանչիւր լեզուով թարգմանելու և հրատարակելու հոգան այն գաղթականութիւնը քաշէր, որ այդ լեզուով խօսում է: Մեծ ոճն կը լինէր այդ յիշատակի կատարում. նորա ձայնը կը լսէր ամենայն Հայ և ուշքի կուգար. նա կը տեսնէր թէ ինչեր ունի և ինչի՞ հետեւից է ընկած. նա կզգար որ յաճախ իր ազգի մեծութեան յիշատակները զոհում է իր մանկական չահերին. նա կը համոզուէր որ այդ մեծ հսկայի կայքերը յաճախ միայն ճանճի գղղոցով են պաշտպանում... Այն՝ որի համար հաղարաւոր արիւններ են թափուել, նորա համար այսօր սանդիմներ տուողն անգամ հպարտութիւնից տրաքում է: Այն հսկան՝ որ 40 գար վիթխարէն տիրել է և հակել, այսօր մի անմիտ Հայի ձեռքով մի կոյմ է մղում և նորա տեղը գրում՝ ի՞նչ. մէկ մեղ... եմը...

4000 ամեայ այդ վիթխարին մէկ հաստատութիւն չկայ գնեց որեւէ այդ մեղները խորտում չգան, ազմուկ չհանեն, ըմբոստանալով իրեանց ոչնչութեան վրայ. 4000 ամեայ այդ վիթխարին մէկ յուշարձան չկանգնեց, մէկ ամրարատակ իր փառաց համար չվարսեց որի վրայ գոքա չհասչէին: Ահա այդ հսկան իր 4000 ամեակը ծօնելով պէտք է անօրէններին ամաչեցնէ, անմիտներին խելքի բերէ, քնածներին զարթեցնէ, երկպառակուածներին միացնէ, և որ գլխաւորն է, այդ ծօնին պէտք է իրաքանչիւր Հայ անհատ մինչեւ իր ոսկորներն զգայ որ ինքն միայն մէկ աւազ է այդ մեծ հսկայի և նորա փառաց ամրարտակների գիմաց...

Այնտեղ կը սոփորէ Հայը օգեւորուել և անձնազոհութեամբ գործել, այն մեծ մարդուն նման որ Հայ ազգին անկախանութեան ժամանակի առաջին յաղթող դրօշակիրն եղաւ. նա կապրի և կը շնչէ այդ մեծ քաջի՝ Վահան Մամիկոնեանի հետ, որ մի բուռն քաջերի հետ իր սուրը թափառում էր Հայոց արեան մէջ, գոչելով.

«Հապա՛, քա՛ջք,
Վառեալ ի զէն
Ի յաստպաշէն,
Արիաբար մարտիցուք.
Մի՛ երկիցուք
Ի բազմութենէ գօրաց նոցա,
Տէր խօսատակէ
Զպատերազմողան,
Տէրն է պատերազմ,
Տէր տկար առնէ
Զհակառակորդն,
Տէրն է յոյս մեր:»

ՕՆԱՆԴ

ՕՏԱՐ ՄԱՄՄՈՒԼԻ ԿԱՐԾԻՔԸ

«Մանչեսթրը Միթի Նիւզ»ը խօսելով հայենական խնդրի վրայ հետեւեալ կարծիքը կը յայտնէ.

«Մենք հաւատաք չունինք թիւրքիոյ ուղղուած աղաչաբաղութիւններուն և կոչումներուն վրայ. թէեւ Հայերը եթէ միայն ապստամբով բաւականանան, համոստ և առաքինի դիրք մը բռնած կը լինին: Բայց մենք կը կարծենք թէ մի քանի հազար մարդիկ իրենց կեանք վտանգի դնելու են իրենց աղատութեան համար և անկէ ետք եւրոպա կրնայ չարժիլ նոցա իրաւունքը պաշտպանելու: Ազատ լինել փափագողը առաջին հարուածը լինք տալու է, թղթե

վրայ եղած որոշումները մինչեւ այսօր ոչ մէկ ապդ ազատած են։ Մեծ ազդութիւնները և անոնց մէջ ալ Անգլիա ոչինչէ այնքան կը վախնան որքան ապստամբելեան չփոթութիւններէ։ Այդ կողմ պատահած ամեն մի չփոթութիւն Թուրքիոյ ունեցած հողերին վրայ նոր մեծ բաժիններ աւելցուցած է, ինչպէս ալ որ եղած լինի պատերազմի բազդը։ Բռնակալութեան տակ հեծող և դժգոհ Հայաստան մը Եւրոպայի խաղաղութեան համար մշտական վտանգ մ'է։ Իսկ եթէ այդ երկիրը խաղաղի և օրինաւոր վիճակի մէջ դրուի, 100,000 զօրքէ աւելի արժէք պիտի ունենայ Թիւրքիոյ համար, երբ խռովութիւնների անհրաժեշտութիւն չըլլայ։»

Հարցումներ անգլիական խորհրդարանի մէջ.

Մարտ 16ի նստին մէջ Պր. Ֆ. Սմիթ-վէնըն խորհրդարանի ուշադրութիւնը հրաւիրեց կապոյտ տետրակի պարունակած պաշտօնական գրութիւններուն վրայ որոնք կը հաստատեն թէ Հայաստանը ապեռապի վիճակի մը մէջ կը գտնուի և թէ Քիւրդերը այժմ պինաւելով թիւրք կառավարութեան կողմէ, կը լիշեցունեն այն ժամանակ ուր Պաշիպօզուքները զէնքի տակ կանչուեցան (1876ի պուլկարական ջարդերի ժամանակը)։ Ատենապանը գովելով հանգերձ Պր. Քլիֆորտ Լոյտի չանքերը ցոյց յայտնեց որ արտաքին գործերի պաշտօնատունէն պէտք եղած աջակցութիւնը չէ գտած։

Պր. Լ. Կովըր խօսք առնելով դէմ խօսեցաւ այն կարծիքին թէ Խորհրդարանի մէջ եղած հարցապնդումները աւելի կրնան դայրացունել Սուլթանը, քանի որ, ըստ, 35 տարուան փորձառութիւնը կը ցուցնէ թէ Թիւրքիոյ արած խոստումները ինքնին անգործադրելի կը մնան և թէ միայն բռնի ուժով կարելի եղած է երկու անգամ ինքնավարական իրենց լուծելիքը քիւրք քրիստոնեաներին ի նպաստ։ Խորհրդարանի ուշադրութիւնը հրաւիրեց նաեւ Հայերի գաղթականութեանն վրայ որ կըսպառնայ երկիրը ամայի թողուլ և Չէրքէզների փոխադրութեան վրայ որոնք ադէտ մը պիտի լինին քրիստոնեայ գիւղացիներուն համար։ Հարցուց նաեւ թէ Մուսա պէյը պիտի պահուի՞ միւս Մէտինէի մէջ, թէ ոչ Դուռը իր սոյորութեան համաձայն, Եւրոպայի մէջ միտքերը հանդարտեցունելէ ետք, ազատ պիտի թողու զայն, երկրին աւելի մեծ պատուհաս մը պրկելու համար։ Ատենապանը այն միտքը պարզեց նաեւ թէ քանի որ Հայերը թէ Թիւրքիոյ և թէ Եգիպտոսի մէջ ցոյց տուած են վարչական բարձր կարողութիւններ, ապահովապէս իրենց կրնայ վտահուիլ իրենց երկրին վարչութիւնը։

ՄԻՒԶԷԼ ՄԵՆ ԴՈՒՔՍԸ

Ապրիլ 7 թուով հետեւեալ ծիծաղաշարժ լուրը հաղորդած են Կ. Պոլսէն Եւրոպական լրագիրներուն.

«Ըսուած է տարածուիլ վայրաքաքիս մէջ թէ Կոմիտասի նախկին փոխարքան և ներկայ Ջարին հօրեղբայրը Միքայէլ Մեծ գուքսը Հայաստանի թագաւոր պիտի հրատարակուի։ Ընայելովայդ լուրիանհեթեթութեանն Բ. Դուռը չատ մտատանջութեան մէջ է այն պատճառով որ յիշեալ ղրոյցը ազդեցութիւն կանէ Հայերի վրայ։»

Երէկ ալ Պեռերբուրգէն հեռագրուած էր հետեւեալը.

«Միքայէլ Մեծ գուքսի անունը չնշուած է ռուս բանակի շրջանակներուն մէջէն։ Կը կարծուի թէ Ջարը այս տեղեկութիւնը տրած է այն բանի համար որ Դուքսը առանց իր հրամանի Նաուսի գործին աղմկը կնութեան առած էր, և չատ տարիներ առաջ ալ Փուչքինի բանաստեղծին աղմկան հետ ամուսնացած էր։ Սակայն և այնպէս Ջարին այս որոշումը քաղաքական նըշանակութիւն մը չունի և Ալմանիայի դէմ ուղղուած տնօրինութիւն մը չէ, թէեւ քանի մը լրագիրներ այդպէս կարծել տան։»

ԼՈՐՏ ԿՐԱՆՎԻԼԻ ԹԱՂՈՒՄՆ

Լոնտոնէն մեզ կը հաղորդեն որ ապրիլ 5ին տեղի ունենալով լորտ Կրանվիլի (ազատական կուսակցութեան պարագլուխներէն մին) յուղարկաւորութիւնը, Մանչեսթերի հայ գաղթականութիւնն ալ մի պատկ ղրկեր էր, դագաղին վրայ դրուելու համար։ Տիար Կ. Բակոբեան ալ այդ առթով մի յատկական նաւակ ուղղած է Լէմի Կրանվիլին (հանգուցեալի տըրին)։

Օսմանեան Սահմանադրութիւնը

«Սէվաֆօր»էն հետեւեալ լուրը կը քաղենք.

«Անցեալները Լորտերի Խորհրդարանին մէջ լորտ Քամփպէլ հարցուց թէ յարմար չէ՞ որ անգլիական կառավարութիւնը ձեռնարկներ անէ Թիւրքիոյ մէջ Սահմանադրութիւնը վերահաստատելու համար։ Լորտ Սալզպըրի այս տարօրինակ հարցումին խուսափողական պատասխան մը միայն տուաւ։ Սակայն այդ վիճաբանութիւնը թարգմանուելով Սուլթանին արուած և բոլորովին հակառակ ազդեցութիւն արած էր Սուլթանը, ինչպէս որ կըհաւատան արժանահաւատ անձեր, բոլորովին որոշած է իր վերհսկողական բացարձակ իշխանութեան արգելք եղող ամեն ինչ վերցունել մէջտեղէն. նոյն իսկ, եթէ ճիշդ են լուսաբերները, Մեծ Վէզիրի պաշտօնը փոփոխութեան ենթարկել և նախարարութիւնը յոկ Պալատի խորհրդատու մարմնի մը վերածել, ինչպէս որ է ռուս կայսրութեան մէջ։»

ԹԻՒՐՔԻԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսեն հետեւեալը կը հեռագրեն «Ռիւքեր»ի գործակալութիւնը.

Իւքիւպի կամոլիկ եկեղեցւոյ զանգակատունը փլցնելու խնդրին համար աւստրիական դեսպանի արած դիտողութիւնը բերանացի եղած է և միեւնոյն ժամանակ այդ դիտողութեան գրաւոր մի օրինակն ալ արտաքին գործերի նախարարութեան կողմէ յղուած է։ Եկեղեցւոյն միջադէպը կը վերագրեն Տէրվիշ փաշայի ազդեցութեանը. այս փաշան որ յէ՛ Սուլթանի առջեւ մեծ նշանակութիւն ունի իբրեւ Ալպանիայի խաղաղարարը և թէ՛ Ալպանիայի կողմերն ալ մեծ հեղինակութիւն, շատ հակառակ է Եւրոպացիներու ունէ ձեռնարկներուն որոնք կը լինին Մակեդոնիայի և Ալպանիայի մէջ։ Պաշտօնական շրջանակներուն մէջ կը խօսուի որ միջադէպը կրնայ շատ ծանր հետեւանքներ ունենալ եթէ լիովին գոհացում չտրուի Աւստրիային։

— Մէհմէտ Փէհլիվան հռչակաւոր ուսուցիչը որ 15 տարիէ ի վեր սարսափ սփռած էր Նայն խակ Կ. Պոլսի մոտիկ տեղերի մէջ կատարած իր վայրագութիւններով և դեռ հազիւ 2 տարի առաջ ձերբակալուելով, բանտ ձգուած էր. այս օրերս ներքուստ սատցած է Սուլթանի ծննդեան տարեդարձին առթով։

— Պուլկարական գործակատար Պր. Վուլքովիչ Բ. Դրան դիմում արած լինելով Սմանչէֆ և Շիշմանօֆ անուն երկու պուլկար փախստականները ձերբակալուեր և բանտ ձգուեր էին, իրենց վրայ կատած լինելով թէ Պր. Պէլչէֆի սպանութեան հեղինակները եղած լինին։ Սակայն մի քանի օր ետք մեծ դեսպաններէն մէկի արած միջնորդութեան վրայ, Սուլթանի իրատեսով ազատ արձակուեցան։

— Մարսէյլի «Սէվաֆօր»ը Կ. Պոլսէն իրեն հաղորդուած լուր մը կը հրատարակէ ճշդութիւնը չերաշխաւորելով. հետեւեալն է այդ լուր։

«Զրոյց տարածուած է ստ թէ անցեալ շաբաթի մէջ մի արիւնահեղ կռիւ տեղի ունեցած է թիւրք զօրքերի և Չէրքէզների միջեւ. այս վերջիններ Այազն–Զմիւռն երկաթուղու ընկերութեան բանուորներն էին։ Ահա ժամանակագրութիւնները։ Անգլիացէն բաւական մեծ քանակութեամբ տինամիթ ղրկուած էր Զմիւռն, յիշեալ երկաթուղու երկայնութեան վրայ բանուած հանքերի մէջ գործածուելու համար։

Տինամիթի անտուկները գաղտնի կերպով նաեւ հանուելէ ետք կամուրջ մը երկաթուղու վակօններուն մէջ փոխադրուած էին և կառախմբի մեկնելու ժամը կը մօտենար։ Ոստիկանութիւնը որ շատ ուշ տեղեկութիւն առած էր այս վերջին ատիճանի «ապստամբական» ապրանքին վրայ. փութաց կայարանը հասնիլ և գրաւել տինամիթը։ Սակայն գործն վերատեսուչ Պր. Փըրսէր ուժգին դիմադրութիւն մը անելով արգելք եղաւ գրաւումին, ըսելով որ ինք պարտաւորութիւն ընտանեցած էր տինամիթը մինչեւ իր հասցէին տանել և թէ թիւրք կառավարութեան հետ իր ունեցած պայմանագիրը իրեն երբէք չէր արգիլեր այդ տեսակ նիւթեր փոխադրելէ, ուրեմն ինք տեղը պիտի հասցունէր բեռը և յետոյ ոստիկանութիւնը կրնար այնտեղէն գրաւել, եթէ յարմար տեսնէր։ Այն ատեն Զմիւռնի կուսակալը հրամայեց որ ոստիկանների ջոկատ մ'երթայ և գրաւումը փութացունէ, սակայն երկաթուղու ընկերութեան հագործերի նախարարութեան կողմէ յղուած է։ Եկեղեցւոյն միջադէպը կը վերագրեն Տէրվիշ փաշայի ազդեցութեանը. այս փաշան որ յէ՛ Սուլթանի առջեւ մեծ նշանակութիւն ունի իբրեւ Ալպանիայի խաղաղարարը և թէ՛ Ալպանիայի կողմերն ալ մեծ հեղինակութիւն, շատ հակառակ է Եւրոպացիներու ունէ ձեռնարկներուն որոնք կը լինին Մակեդոնիայի և Ալպանիայի մէջ։ Պաշտօնական շրջանակներուն մէջ կը խօսուի որ միջադէպը կրնայ շատ ծանր հետեւանքներ ունենալ եթէ լիովին գոհացում չտրուի Աւստրիային։

— Մէհմէտ Փէհլիվան հռչակաւոր ուսուցիչը որ 15 տարիէ ի վեր սարսափ սփռած էր Նայն իսկ Կ. Պոլսի մոտիկ տեղերի մէջ կատարած իր վայրագութիւններով և դեռ հազիւ 2 տարի առաջ ձերբակալուելով, բանտ ձգուած էր. այս օրերս ներքուստ սատցած է Սուլթանի ծննդեան տարեդարձին առթով։

— Պուլկարական գործակատար Պր. Վուլքովիչ Բ. Դրան դիմում արած լինելով Սմանչէֆ և Շիշմանօֆ անուն երկու պուլկար փախստականները ձերբակալուեր և բանտ ձգուեր էին, իրենց վրայ կատած լինելով թէ Պր. Պէլչէֆի սպանութեան հեղինակները եղած լինին։ Սակայն մի քանի օր ետք մեծ դեսպաններէն մէկի արած միջնորդութեան վրայ, Սուլթանի իրատեսով ազատ արձակուեցան։

— Մարսէյլի «Սէվաֆօր»ը Կ. Պոլսէն իրեն հաղորդուած լուր մը կը հրատարակէ ճշդութիւնը չերաշխաւորելով. հետեւեալն է այդ լուր։

«Զրոյց տարածուած է ստ թէ անցեալ շաբաթի մէջ մի արիւնահեղ կռիւ տեղի ունեցած է թիւրք զօրքերի և Չէրքէզների միջեւ. այս վերջիններ Այազն–Զմիւռն երկաթուղու ընկերութեան բանուորներն էին։ Ահա ժամանակագրութիւնները։ Անգլիացէն բաւական մեծ քանակութեամբ տինամիթ ղրկուած էր Զմիւռն, յիշեալ երկաթուղու երկայնութեան վրայ բանուած հանքերի մէջ գործածուելու համար։

Տինամիթի անտուկները գաղտնի կերպով նաեւ հանուելէ ետք կամուրջ մը երկաթուղու վակօններուն մէջ փոխադրուած էին և կառախմբի մեկնելու ժամը կը մօտենար։ Ոստիկանութիւնը որ շատ ուշ տեղեկութիւն առած էր այս վերջին ատիճանի «ապստամբական» ապրանքին վրայ. փութաց կայարանը հասնիլ և գրաւել տինամիթը։ Սակայն գործն վերատեսուչ Պր. Փըրսէր ուժգին դիմադրութիւն մը անելով արգելք եղաւ գրաւումին, ըսելով որ ինք պարտաւորութիւն ընտանեցած էր տինամիթը մինչեւ իր հասցէին տանել և թէ թիւրք կառավարութեան հետ իր ունեցած պայմանագիրը իրեն երբէք չէր արգիլեր այդ տեսակ նիւթեր փոխադրելէ, ուրեմն ինք տեղը պիտի հասցունէր բեռը և յետոյ ոստիկանութիւնը կրնար այնտեղէն գրաւել, եթէ յարմար տեսնէր։ Այն ատեն Զմիւռնի կուսակալը հրամայեց որ ոստիկանների ջոկատ մ'երթայ և գրաւումը փութացունէ, սակայն երկաթուղու ընկերութեան հատարիմ և լաւ վարձատրուած Չէյպէք ծառայները ետ մղելին ոստիկանների յարձակումը. կառավարութիւնը կանոնաւոր պօրք դրկել ստիպուեցաւ, որուն դարձեալ կռիւ տեղի տալ հրացաններով պինդ բազմաթիւ Չէյպէքների հետ։ Այս դէպքի վրայ Պր. Փըրսէր իսկոյն երկու հեռագիրներ տպղեց. մին Կ. Պոլսի անգլիական դեսպանատունն և միւսը լորտ Սալզպըրիին, խնդրելով իրենց պաշտպանութիւն։»

— Ուրիշ անգամներու պէս այս տարի ալ Կ. Պոլիս եկող 80ի չափ Հունգարացի ըղձիկներ Սուլթանին ծախքով փորձերնին հշտապուցին իրենց ի պատիւ արուած սեղանի մը վրայ. Կ. Պոլսի քաղաքապետ, Բրաման պէյը որ սեղանին կը նախագահէր, ճառ մը խօսեցաւ որի մէջ յայտնեց թէ իրեն պարծանք կը համարի բարի գալուստ մաղթել բարեկամ ազգի մը ազնիւ քաղաքացիներին որոնք Կ. Պոլիսը այցելած են և այդ կերպով կը յիշեցունեն թէ Օսմանցի և Մաճառ ազգերը ի՛նչ եղբայրական կապերով կապուած են իրարի հետ։ Ճառէն վերջ միայն Բրաման պէյին հասկցուցին որ 80 հիւրերէն միայն 3ն ազգով Մաճառ էին. իսկ ծնացածները բոլորն ալ Հրեայ, որոց դէմքին վրայ եթէ մի քիչ ուշադրութեամբ նայուէր, ճառի մը պէտքը ալ չէր ծնար։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Վաշինկթըն, 2 ապրիլ. Իտալական դեսպան Պր. Ճաճա պիտի մեկնի չաբաթ օր։ Այդ կերպով Իտալիոյ և Միացեալ Նահանգներուն յարաբերութիւնները աւելի պիտի ձգտին։ Վէճի պատճառը հետեւեալն եղած է. Միացեալ Նահանգներուն մէջ գաղթող Իտալացի գաղթականներէն մի շատ պարապորդներ և չարագործներ կազմած էին աւազակային գաղտնի ընկերութիւն մը և Ն. Օրլէանս նահանգին մէջ ստեղ իրենց արհեստ ի գործ կը դնէին, երբեմն ալ չատ յանդուգն կերպով։ Ադոնցմէ 10ի չափ անձեր ձերբակալուած էին իբր մարդասպաններ, սակայն երդուեալներէ կազմուած ատեանը դանոնք անպարտ հրատարակած էր։ Քաղաքացիներն կասկածելով թէ կաշառուած էին դատաւորները այդպիսի թոյլ ընթացք մ'ունենալու համար, ա՛լ օրէնքի ժոխկ չտալով իրենք խմբովին բանտին վրայ արշաւեցին և չարագործները դուրս հանելով վիշտցին (իրենց ձեռքով օրէնքը գործադրեցին զանոնք սպաննելով)։

Այս դէպք Իտալացի բոլոր գաղթականներուն մէջ մեծ յուզում և ցոյցեր առաջ բերաւ որոնք սկսան վրէժխնդրական միջոցներուն վրայ խորհիլ իրենց հայրենակիցներուն այդ կերպով սպանուելուն վրայ։ Իտալական կառավարութիւնն ալ խիստ գիտողութիւն մը ուղղեց Միացեալ Նահանգներուն արտաքին գործերուն նախարար Պր. Պլէյնի և պահանջեց որ պրաժական հատուցում արուի սպանուածներուն բնտանիքին։ Բայց օրս հետեւեալ Պր. Պլէյն պա-

տասխանեց որ քննութիւն պիտի բացուի գործին վրայ և յետոյ պիտի վճռուի թէ հատուցում տալ պէ՞տք է թէ ոչ, իսալիան գոհ չեղաւ այդ պատասխանէն զոր դանդաղ դատաւ, ուստի և իր դեսպան ետ կանչեց, մինչեւ ի նոր տնօրէնութիւն։

— Կ. Պոլիս, 3 ապրիլ. Իւսքիւպի մէջ Քէմալի փաշային հրամանով, ոստիկանութիւնը մտաւ կաթոլիկ եկեղեցու մը մէջ և խուզարկութեան համար քակեց եկեղեցու դանդակատունը։ Եկեղեցին Աւստրիայի հովանաւորութեան տակ լինելով, աւստրիական դեսպանը մի ծանուցագիր ուղղեց Բ. Դրան պահանջելով որ կուսակալը պաշտօնանկ լինի ու զանգակատունը վերաշինուի։

— Պետերբուրգ, 3 ապրիլ. Մի շատ մեկնութիւնների տեղի տուած է այն հրաման որ ուղղուեցաւ Լօպանօֆ իշխանին և Զօրավար Շուվալօֆին թէ անմիջապէս իրենց պաշտօնատեղիներն, Վիէննա և Պերլին մեկնին, արձակուրդի ժամանակամիջոցէն առաջ։ Կը կարծուի թէ այս դեսպանները Վիէննայի և Պերլինի կառավարութիւններին կեղծագիրներ պիտի հաղորդեն Գուլկաբիտի և Ար. Րուժէլիի խնդրի մասին։

— Սօֆիա, 3 ապրիլ. Սօֆիայի քաղաքապետը Պր. Ռատօսլավօֆ պաշտօնական յայտարարութիւն մը հանել տուաւ երկրին բոլոր կողմերը թէ 20 հազար ֆրանգ պարգեւ պիտի տրուի այն անձին որ կը յաջողի գտնել Պր. Պէլչէֆի սպանողները։

— Ֆիլիպէ, 7 ապրիլ. Բ. Դուռը պատասխանը ղրկերէ ռուսական դեսպանատան ասելով թէ ոչ մէկ կառավարութիւն և ոչ իսկ Գուլկարիա իրեն ներկայացուցեր են, Ար. Րուժէլիի կառավարչութիւնը Ֆէբրինանտ Իշխանի անձին վրայ վերահաստատելու խնդիրը, որ մի՛ գուցէ գործերի հրատապ վիճակ մ՚առաջ գայ դարձեալ։

— Պետերբուրգ, 7 ապրիլ. Այժմ Մոլդաւիոյ նախարարութեան պաշտօնատանն մէջ կը քննուին երկու գործիքներ որոնք իրը թէ պիտի կարենան նաւերը ապահովել աւազի վրայ խրուելէ և կամ թորփիլի զարնուելէ, վտանգէն առաջ նախազգուշացնելով նաւուղիղը։

— Սօֆիա, 7 ապրիլ. Ռուսական գործակալութեան մի քաւասը որ Իշխանին և նախարարներին սպառնական նամակներ յղած էր, արտաքսուեցաւ երկրէն։

— Պերլին, 7 ապրիլ. Բժշկական Ակադեմիան իր վերջին նստի մէջ յայտարարեց որ քօխեան դարմանութեամբ քախտի բուժարար յատկութիւնն չունի և թէ այդ կերպով դարմանուած կարծուածներէն չատերը դարձեալ կրկնած են իրենց հիւանդութիւնը։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Հետեւեալ գիրքերն կարելի է ստանալ Արմենիայի խմբագրատունէն, իրենց առջեւ նշանակուած գիներով և փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

Աւրժէքը կանխիկ վճարուած՝ գիրք չղրկուիր։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ա. ՀԱՅ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (սպառած)։
Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԷԼԻ »
Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՏԱՄԲԱՊԵՏԱՑ (Պուլղար ազգին իր ազատութիւն ձեռք բերելու համար մէկ դարէ ի վեր արած չանքերի խիստ հետաքրքրաշարժ նկարագրութիւնն է։) (1 ֆր. 10 սնթմ.) 1 ֆր. 50 սթմ.
Ե. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(Հայաս. տանցիներէն պանդխտութեան տխուր հետեւանքներէն մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով։) Գինն (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ.
Զ. ԴԱՄԱՌ ՓԱՔԻՊԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենաց ուարտեղուածք. (Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաշունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են)։ 50 հատը 2 ֆր. և 50 սանթիմ, հատը (5 սնթմ.) 10 սանթիմ։
Է. ԼԻՆԶԻ ՕՐԷՆԻՔ ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. (Սպառած).

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Ը ԹԻՒՐՔԻԱԻ ՀԱՅԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ

ԳՐՔԷ Ջ. Ա.

Թիւրքիոյ Հայերին և իրենց դրացի Թիւրքերի, Քիւրդերի, Չերքէզներու, Ասորիներու, Եզիտիներու, Գրզըլպաշներու և այլ ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրական տեղեկութիւններ տրուած են այս տետրակի մէջ։ Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգէ բնակիչներու թուին մէկ բաղդատական ցուցակը կցուած է տետրակին վերջը։ Գինն է 50 սանթիմ, փոստի ծախքը Արմենիայի խմբագրատունէն վճարուելով։ (Պարսկաստանի Հայերին համար 35 սանթիմ)։

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերուն վրայ մանաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը ղրկուի փակագծի մէջ նշանակուած գիներով։

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՆ ԱՌՆՈՒԱԾ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐՔԷ Ա. ՊՊԼՂԱՐԻՊ

Ա. յս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիքների պատճառ դարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իւր որդւոյ ձեռքով սպաննուած և անհետացած է աշխարհէ։

Կը ծախսուի Արմենիայի խմբագրատունը, գին 1 ֆրանգ, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

ԲԱՌԳԻՐՔ ԳԱՂՂԻԵՐԷՆ—ՀԱՅԵՐԷՆ

ԱՐՈՒԵՍՏԻՑ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

ԵՐԿՈՒՀԱՏՈՐ

Պատկերազարդ տպագրութիւն

Ընտիր թղթի վրայ, մեծաւորապէս 1300 ձեւերով, մեծադիր քառածալ, մօտ 300 թերթերէ բաղկացեալ ի վերջ երկրորդ Հատորին՝ յաւելուած Հայերէն–Գաղղիերէն Բառագրոց։

ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՑ

Հ. ՄԱՆՈՒԷԼ ՎԻՐԳՈՒ ՔԱՋՈՒՆԻՈՑ

Լոյս տեսած է Առաջին Հատորն։ 150 թերթ, 627 գեղեցիկ ձեւերով։

Բայսած է բաժանորդագրութիւն երկու Հատորին ի միասին։

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Ա. Կանխիկ վճարումն բաժանորդագնոյ երկու հատորին ի միասին։

Բ. Բաժանորդագինն է 50 ֆր.։

Գ. Բաժանորդագրութիւնն կը շարունակուի մինչեւ յվերջ 1891 տարւոյս։

Դ. Բաժանորդագրութեան պայմանաժամն աւարտելէ յետոյ՝ գինը պիտի բարձրանայ։

Ե. Բաժանորդագրուողք պիտի ընդունին անդորրագիր դրամոց ստացման մասին ի վարչութենէ Տպագրատան Մխիթարեան Պատ. Միաբանութեան Վենետկոյ։

Զ. Բաժանորդագրուողք պիտի ընդունին Առաջին Հատորն անդորրագրին հետ ի միասին. իսկ երկրորդ Հատորն՝ այն ինչ տպագրութիւնն աւարտի

Այս կարեւոր գործին բաժնորդագրուելի ցանկացողները կարող են դիմել նաեւ Մարսէյլ Արմենիայի խմբագիր–տնօրէն Մ. Փորթուգալեանին որ այդ ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ ԲՈՒՈՒԻՐՔԻ բաժնորդագրութեան գործակալ կարգուած է։

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

ԲԱՖՖԻ, ԴԱԻԻԹ ԲԻԿ պատմական վէպ (1722–1728) Ա, Բ և Գ գիրքերն վերջաբանով մէկտեղ մէկ հատորի մէջ ամփոփուած. Բ տիպ։ 8 ֆր. 75 սանթիմ։

ԲԱՖՖԻ, ԽԵՆԹԸ (Աշխածներ վերջին ռուս–թուրքական պատերազմից) և ՋԱԼԱԼԷՏՏԻՆ (Մի պատկեր նրա արշաւանքից)։ երկուքը մէկտեղ մէկ հատորի մէջ ամփոփուած. Բ տիպ։ 8 ֆր. 75 սն։

ԲԱՖՖԻ, ՀԱՑ ԿԻՆԸ ԵՒ ՀԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ 3 ֆր. 25 սնթմ.։

ԲԱՖՖԻ, ԿԱՑԾԵՐԻ ՎԵՐՋԸ 1 ֆ. 75 սն։

ԾԵՐԵՆՑ, ԹԼՈՂՈՐՈՍ ՌԵՅՏՈՒՆԻ 3 ֆրանգ 50 սանթիմ

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆՑ, ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԽԱՉԱԿՐՈՒԹԵԱՆՑ և Թագաւորութեանն Երուսաղէմայ 2 ֆրանգ

ՆԻԿՈԼ կամ գաղէ Հայոց Եւրոպիոյ ի կաթոլիկութիւն 1 ֆր.

ՋԱՑՆԱԳՐԵԱԼ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ Մ. Պատարագի 10 ֆր.

ԵՐԶՆԿԵԱՆՑ, Ա.ԶԳԱՑԻՆ ԵՐԳԱՐԱՆ (Ձայնագրեալ հայկական նոտաներով) 2 ֆր. 80 սանթիմ

ՕՐԱՑՈՑՑ 1891 թուականին, տըպագրութիւն Էջմիածին, 70 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄՆ ՀԱՑԱՍՏԱՆԻ (L'Arménie en mouvement). Մայր Հայաստանի պատկեր 1 ֆրանգ

—Բաֆֆի. — ՍԱՄՈՒԷԼ (Բաֆֆիի հրատարակած ազգային վէպերի վերջինն է այդ որի նիւթը առնուած է Դ դարի Հայերի կեանքէն և որ, բացի իւր ներշնչած ազատասիրական զգացումներէ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ այն ժամանակի Հայերի բարքերին, սովորութիւններին եւայլնի վրայ։) 10 ֆր.

—Հ. Ղ. Ալիշան— Նշմարք եւ Նշխարք Հայաստանի Ա, Բ և Գ պրակները (Հայաստանի հետաքրքրական տեղերէն և քաղաքներէն 36ին լուսանկար պատկերները զետեղուած են Նշմարքի 3 պրակներուն մէջ, անոնցմէ իւրաքանչիւրին վրայ պատմական և աշխարհագրական հմտալից տեղեկութիւններով, աշխարհարար լեզուով գրուած Վեր. Հ. Ղ. Ալիշանէն)։ 3 պրակներն միասին 26 ֆր. և 50 սնթմ.

Հ. Ղ. Ալիշան — Պատկերազարդ Աշխարհագրութիւն Նոր Հայաստանի (Բազմահմուտ Հ. Ալիշանի աշխատասիրութեամբն հրատարակուած այս աշխարհագրութիւն որ մեծադիր և երկհատոր 105 երեսներէ բաղկացած է և գիւրահասկանալի պարզ գրաբար լեզուով գրուած, զարդարուած է 35ի չափ պատկերներով որոց մէջ կը գտնուին Վան քաղաքի, Վանի բերդի, Պայազիտի, Էջմիածնի, Մշոյ զանազան նշանաւոր աւերակներուն և պատկերներն։ Գրքին վերջը կը գրաւնուի բուն Հայաստանի, այսինքն Մեծ Հայքի, բոլոր քաղաքներուն, բերդերուն, գիւղերուն, լեռներուն, գետերուն մի ընդարձակ ցանկը ուր իւրաքանչիւրին առջեւ նշանակուած է թէ գրքի քանիերորդ տանը մէջ գրուած է անոր վրայ)։ Գինն 5 ֆր. և 50 սնթմ.։

ՀԱՑ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐՔ

1878ին Պէրլինի գնացած հայ պատուիրակութեան պատկերը՝ գեղեցիկ թղթի վրայ առնուած և պատուիրակներուն անուններն հայերէն և ֆրանսերէն տառերով միանգամայն տըպագրուած, կը ծախսուի Արմենիայի խմբագրատունը։ Գինն է 1 ֆրանգ, փոստի ծախքն խմբագրատունէն վճարուելով։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՑԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie et Papeterie du Midi, Allées de Meilhan, 44.